ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IX, № 7, 1956 Биол. и сельхоз. науки

ՆՈՐ ԳՐՔԵՐ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ վերջերս լույս են տեսել մի քանի աշխատություններ, որոնք մեծ չափով կօգնեն ռեսպուբլիկայի գյուղատնտեսության բնագավառի աշխատողներին նրանց գործնական աշխատանքներում։

Լույս է տեսել բիոլոգիական գիտությունների դոկտոր Ս. Հ. Պողոսյանի «Յուրարմատ խաղողի հնագույն փոփոխակների և նրանց հիբրիդների սերմնաբույսերի բնույթի մասին» ընդարձակ աշխատությունը։ Գիրքն ամփոփում է խաղողի սելեկցիայի բնագավառում հեղինակի կատարած երկարամյա աշխատանքի արդյունքները։

Գրքի առաջին գլուխը պատմական ակնարկ է խաղողի կուլտուրան Հայաստանում մշակելու մասին։ Հենվելով Կարմիր-բլուրի պեղումներից ստացված նյութական մնացորդների և պատմական ու գրական վերջին տվյալների վրա, հեղինակը եզրակացնում է, որ Արարատյան հարթավայրում մշակվող խաղողի մի շարք լավագույն սորտեր գոյություն ունեն 3000 տարուց ի վեր։

Գրքի երկրորդ գլխում գրական տվյալների և սեփական հարուստ փորձի հիման վրա հեղինակը պարզաբանում է յուրարմատ խաղողի սերմնաբույսերի ժառանգականության փոփոխության բնույթը, որը տեսական և գործնական մեծ նշանակություն ունի նպատակադիր սելեկցիայի համար։ Ի. Վ. Միչուրինի ուսմունքից հայտնի է, որ բույսի ժառանգական հատկանիշները փոփոխվում են արտաքին միջավայրի ազդեցության տակ։ Հեղինակը ցույց է տալիս, որ հաղարամյակների ընթացքում կտրոններով բազմացված յուրարմատ խաղողի վազը սերմերով բազմացնելու դեպքում սերնդում տալիս է ժառանգականությունը խախտված սերմաբույսեր, օժտված մեծ փոփոխականությամբ, սակայն կուլտուրական հատկություններով։

Երրորդ գլխում տրված են խաղողի սերմնաբույսերի փոփոխականության բնույթը անհատական զարգացման ընթացքում, տնտեսական արժեքավոր հատկությունների զարգացման և կայունացման բնույթը ժառանգականության կայունացման ընթացքում, ինչպես և արտաքին պայմանների ազդեցությունը առանձին հատկությունների զարգացման վրա սերմնաբույսերի կյանքի տարբեր էտապներում։

Գրքի չորրորդ գլխում, որը նվիրված է խաղողի սերմնաբույսերի կենսունակության հարցին հեղինակը փորձերի տվյալներով և տեսականորեն հիմնավորում է սերմնաբույսերի վեգետատիվ սերնդի բարձր կենսունակությունը, համեմատած դարերի ընթացքում միայն կտորններով բազմացված սորտերի վեգետատիվ սերնդի կենսունակության հետ։

Գրքի հինգերորդ գլուխը շատ ուսանելի է բույսերի դաստիարակման միչուրինյան մեթոդի կիրառման տեսակետից։ Այդտեղ մանրամասն նկարագրվում է հիբրիդային սերմնաբույսերի դաստիարակումը մենտորի մեթոդով։ Սերմնաբույսերի դաստիարակումը վազահասության և ցրտադիմացկունության ուղղությամբ, համապատասխան արտաքին պայմանների ազդեցության ներքո։ Այդ գլխում «Գործնական արդյունքներ» վերնագրի տակ հեղինակը նկարագրում է իր և բիոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Ս. Խաչատրյանի ստացած՝ խաղողի Արմենիա, Հրազդան Արագածի, Վարդենի, Տոկուն նոր սորտերը և տարբեր արդյունաբերական նշանակություն ունեցող, տարբեր ժամանակներում հասունացող հեռանկարային սերմնաբույսերը, որոնք բազմացված են հետագայում արտադրությանը հանձնելու համար։

Ս. Պողոսյանի աշխատությունը պետք է համարել միչուրինյան ագրոբիոլոգիայի նվաճումներից մեկը, նրա լավագույն կոնկրետ կիրառումը խաղողագործության բնագավառում։ Այդ աշխատությունը լավագույն օրինակ կարող է ծառայել մի շարք տեսական հարցեր հմտորեն առաջ քաշելու և գործնականորեն լուծելու տեսակետից։ Գրքում առաջ են քաշված տեսական նոր խնդիրներ, որոնց լուծումը շատ կարևոր նշանակություն ունի ժողովրդական տնտեսության համար։

* * *

Հայաստանի լեռնային շրջանների պտղաբուծության զարգացման հարցերով զբաղվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պտղաբուծության ինստիտուտի Լենինականի բաժանմունքը։ 1955 թվականի վերջին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել վերոհիշյալ բաժանմունքի աշխատակից բիոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Լ. Ագուլյանի աշխատությունը՝ «Խնձորենու միչուրինյան սորտերը Հայկական ՍՍՌ Լենինականի սարահարթում» խորագրով։ Այդ գիրքը հանդիսանում է բաժանմունքի 18 տարվա փորձնական աշխատանքների արդյունքների ամփոփ շարադրանքը։

Հեղինակը նախ համառոտակի բացատրում է խնձորենու բիոլոգիական առանձնահատկությունները, խնձորենու տարածվածությունը Հայկական ՍՍՌ շրջաններում, այնուհետև տալիս է Լենինականի սարահարթի էկոլոգիական, կլիմայական հողային առանձնահատկությունների բնութագիրը, համեմատություններ կատարելով Միչուրինսկի հետ, որտեղ ստեղծվել են միչուրինյան սորտերը։

Հեղինակը երկար տարիների փորձի հիման վրա անհրաժեշտ մանրամասնությամբ նկարագրում է Լենինականի սարահարթի էկոլոգիական պայմանների ազդեցությունը միչուրինյան խնձորենու սորտերի վրա։ Այդ հետաքրքիր ուսումնասիրությունը կատարվել է միչուրինյան 26—28 սորտերի նկատմամբ, սկսած նրանց սերմերի ծլելուց, նեբառոյալ պտղարերության մի շարք տարիները։ Գրքի այդ բաժինը մեծ հետաքրքրություն է ներկայացնում և ուսանելի շատ բան է պարունակում պտղաբուծությամբ զբաղվող մասնագետների ու պրակտիկ աշխատողների համար։

Գրքի մեծ մասը նվիրված է արտադրական գործնական հարցերի լուսաբանմանը։ Այստեղ խնձորենու միչուրինյան սորտերը բնութագրվում են իրենց պտղի սպառողական և ապրանքային որակի ցուցանիշներով։

Լենինականի սարահարթի պայմաններում իր կատարած ուսումնասիրությունների հիման վրա հեղինակը տալիս է միչուրինյան 26 սորտերի բիոլոգիական բնութագիրը։

Որպես իր գիտական աշխատանքի գործնական եզրակացություն, հեղինակը ցույց է տալիս, թե Հայկական ՍՍՌ-ի շրջանների համար ինչպիսի սորտեր են ընդունելի և որոնք կարող են աճել ծովի մակարդակից 1500 մետրից բարձր լեռնային գոտում։ Հայկական ՍՍՌ-ի բարձր լեռնային գոտին ըստ կլիմայական և հողային առանձնահատկությունների հեղինակը բաժանում է երեք խմբի, յուրաքանչյուր խմբի համար առաջարկում է պտղատու ծառատեսակների և թփատեսակների սորտիմենտ, նկատի ունենալով այդ տեսակների համակեցության արտադրության պահանջների մի շարք գործնական հարցերը։ Հեղինակը համառոտ կերպով տալիս է պտղատու այգի ստեղծելու տեխնիկան։ Սկսելով այդու համար հողամասի տեղի ընտրությունից, նա տալիս է խնձորենու սորտերի տեղադրումը այդում ըստ նրանց բիոլոգիական խմբերի և սորտերի։ Սահմանում է այդու տնկման ժամկետներ ըստ առանձին խումբ շրջանների, առաջարկում է միջոցառումներ այգիները ցրտահարությունից պաշտպանելու և ձմռան ցրտերից տուժած այգիները լավացնելու համար։ Միչուրինյան սորտերով պտղատու այգիներ բազմացնելու համար կարևոր գործնական հարց է պատվաստակալի և պատվաստացուի ընտրությունը, ինչպես նաև ծառերի սաղարթի ձևավորումը։ Մոտ երկու տասնյակ տարիների փորձերի հիման վրա հեղինակը կոնկրետ և համոզիչ պատճառաբանությամբ պատասխանում է այդ հարցերին։ Ընդ. Ագուլյանի աշխատությունը արժեքավոր գործ է գիտական և արտադրական առումով։

Գիրքը հրատարակված է խնամքով. դա ցույց է տալիս, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը գրքի հրատարակման տեխնիկայի տեսակետից 1955 թվականին մեծ է բերել զգալի հաջողություններ։

Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ստացվել է 9 IV 1956 թ.։